Ընդհանուր բեռնափոխադրման ծախսերը կազմել են 2050 եվրո: Մաքսային ձևակերպումները կատարվելու են ՄՃՓ մաքսատանը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 987 -Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ  
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱԲԵՐՂ»  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-2/13220-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-6/16376-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրանները (35 տեղ, 67670 կգ ընդհանուր քաշով, 22490820 դրամ արժողությամբ, ներառյալ 526812 դրամ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 988 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՆՆԱԿԱԲԵՐՂ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N 3/3.8-1/15987-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 6-ի N ԱԱ/3-4/13085-12 եզրակացությունները, **ո թ ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գոռտիգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01802276) 2012 թվականի նոյեմբերի 26-ին կնքված՝ N 16/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալերի մատակարարում՝ 3600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 989 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱՐԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 1**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 7-ի N 3/3.8-1/16045-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N ԱԱ/3-4/13173-12 եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-835-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գազն Լենդ Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00856401) 2012 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված N 009/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կաթսայատան արտաքին գազատարի կառուցման նախագծահետազոտական և շինհավաքակցման աշխատանքների իրականացում՝ 7000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Շ Մ Ա Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ - 990 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1054-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱ-  
ՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 3/3.8-1/16152-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/13420-12 եզրակացությունները, **ո ր ո շ**

1. Սահմանել, որ «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Մեծն Ներսես» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012-2014թթ իրականացվող բարեգործական ծրագրի մասին» N Մ-1054-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԻԿԱ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02701613) 2012 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N 21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գնորդին բենզինի կամ դիզելային վառելիքի հանձնում, ինչպես նաև բենզալցակայանում կտրոնների ընդունման և նավթամթերքի բաց թողնման կազմակերպում՝ 1100000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 991 - Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N Մ-835-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱՔԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱ-  
ԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/16242-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ԱԱ/3-4/13375-12 եզրակացությունները և հաշվի առնելով «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կոնստիտուցիայի 2012 թվականի դեկտեմբերի 5-ի N 3/Թ-20 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հոկտեմբերի 19-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-835-Ա որոշման միջից հանել 2-րդ կետի 15-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 992 - Ա  
քաղ. Երևան**

**«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 7-ի N 3/3.8-1/16047-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 01/7761-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 11-ի N 04/07-1/14771-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N ՖԲ/ԱՆՄ-5/8872-12, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N ՎՄ/3-4/13180-12 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

- 1. Բարեգործական որակել «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1576396 դրամ արժողությամբ «Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագիրը (կցվում է):
- 2. Սահմանել, որ «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Սիլիկյան թաղ., 4-րդ փող. 1-ին նրբ., տուն 14/16-1, ՀՎՀՀ՝ 01242562) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝
  - 1) «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2009 թվականի մարտի 1-ին կնքված՝ N Կ 012 0309.7867 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գազի մատակարարում և գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայության մատուցում՝ տարեկան 1047040 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.
  - 2) «Երևան ցուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2009 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 01-0017-2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրամատակարարման

- և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ տարեկան 165356 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.
- 3) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2009 թվականի փետրվարի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ տարեկան 84000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.
- 4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Արևմուտք» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2010 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 262051 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրաէներգիայի մատակարարում՝ տարեկան 280000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:
- 3. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարած աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:
- 4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



«Ջերմիկ անկյուն» հիմնադրամի


տնօրեն

Ե.Կիրակոսյանի կողմից

«03» դեկտեմբեր 2012 թ.

«ՋԵՐՄԻԿ ԱՆԿՅՈՒՆ» ԽՄԲԱՅԻՆ ՏՆՑ ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	<p>«Ջերմիկ անկյուն» խմբային տան ծրագրի նպատակներն են՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Ջերմիկ անկյուն» խմբային տունը ստեղծված է որպես համայնքահեն երկարաժամկետ խնամքի տուն՝ նպատակ ունենալով միայնակ, խնամքի կարիք ունեցող հաշմանդամներին ապահովել կացարանով, սննդով, կենսապահովման համար նվազագույն պայմաններով և բժշկական, սոցիալ-հոգեբանական օգնությամբ ու իրավունքների պաշտպանությամբ:</li> <li>2. «Ջերմիկ անկյուն» խմբային տան նպատակն է հաշմանդամներին հասարակություն ներառման համար ապահովել համապատասխան միջոցառումների իրականացումը՝ կենցաղավարության, սոցիալ-մշակույթային, կրթական և այլ հմտությունների ուսուցման միջոցով:</li> <li>3. «Ջերմիկ անկյուն» խմբային տան մոդելը, որպես հաշմանդամների վերականգնման այլընտրանքային ծառայությունների տրամադրման տնտեսական առումով առավել արդյունավետ և առաջադեմ տեսակ, ներդնել Հայաստանի Հանրապետությունում:</li> </ol>
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	<p>ՀՀ կառավարության 2003թ.-ի հունվարի 16 –ի N66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետով նախատեսվող հարկային արտոնությունների ստացում:</p>
3. Բարեգործը	<p>«Ջերմիկ անկյան բարեկամներ» ինկորպորացիա                  հասցե՝ ԱՄՆ, 1037, Արիզոնա 85280</p>
4. Ծրագիրը կատարողը	<p>Ծրագիրն իրականացվում է «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից                  Հասցե՝ ք. Երևան, Սիլիկյան քաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն, ՀՎՀՀ 01242562</p>




5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	<p>Ծրագիրը իրականացվում է Հայաստանում՝ Երևանի Աջափնյակ վարչական շրջանում Սիլիկյան քաղ., 4-րդ փող., 1-ին նրբ., 14/16-1 տուն հասցեում, բնագավառը՝ սոցիալական:</p>
6. Ծրագրի բյուջեն	<p>Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1 576 396 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր ինսունվեց) դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի:</p>
7. Բարեգործություն ստացողը	<p>«Ջերմիկ անկյուն» խմբային տան բնակիչներն են՝ 18 տարին լրացած, հատուկ կրթահամալիրները ավարտած, մտավոր և ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձիք: Ընտրությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության, հատուկ կրթահամալիրների և «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի կողմից նախապես մշակված չափորոշիչների հիման վրա:                  Ներկայումս խմբային տանը բնակվում են 13 երիտասարդներ (4 տղա և 9 աղջիկ), որոնք տեղափոխվել են ք. Կապանի թիվ 3 և Փարաքարի թիվ 2 կրթահամալիրներից:</p>
8. Ծրագրի իրականացման տևողությունը	<p>Ծրագրի իրականացման ժամկետն է՝ 01 հունվար 2013թ. – 31 դեկտեմբեր 2013թ. (շարունակելի):</p>
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<p>«Ջերմիկ անկյուն» խմբային տան գործունեության ընթացքում կատարվում են կոմունալ վճարումներ, որի տարեկան հաշվարկը կազմում է 1576396 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր ինսունվեց) դրամ (առանց ավելացված արժեքի հարկի) որից՝ գազ -1047040 դրամ, ջուր -165356 դրամ, էլեկտրաէներգիա - 280000դրամ, հեռախոսակապ – 84000դրամ:</p>

16/16

16/16

<p>10. Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</p>	<p>Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ակնկալվում է իարկային արտոնություն ստանալ հետևյալ գործարքների մասով՝</p> <ul style="list-style-type: none"> <li>Պայմանագիր կնքված գազի (01.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը (ներառյալ սպասարկման վճարը) կազմում է 9200 խ.մ. (1047040 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), էլեկտրոէներգիայի (30.08.2010թ. -անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 11200 կվտ.ժ. (280000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի), հեռախոսակապի (20.02.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 84000 դրամ՝ առանց ԱԱՀ –ի և քրի (24.03.2009թ. - անժամկետ), որի միջին տարեկան ծախսը կազմում է 1140խ.մ. (165356դրամ՝ առանց ԱԱՀ-ի) սպասարկման գրասենյակների մատակարարման և սպասարկման դիմաց վճարների:</li> </ul>
<p>11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</p>	<p>Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:</p>
<p>12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևան քաղաքի քաղաքապետարանի, Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների հետ :</p>
<p>13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</p>	<p>«Ձերմիկ անկյուն» հիմնադրամը պարբերաբար և նաև իրենց պահանջով հաշվետվություն է ներկայացնում դոնոր կազմակերպությանը:</p> <ul style="list-style-type: none"> <li>Օրենքով սահմանված կարգով հաշվետվություն կներկայացվի նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</li> </ul>



16/9



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 993 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՈՒՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N 3/3.8-2/16375-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N 1/02.3/6495-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 11-ի N 02-Մ-93 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N ՎՄ/3-6/13219-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**


1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (տեխնիցիումի գեներատոր իզոտոպ, 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 317 եվրո, «Ձվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 994 - Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԹՈՊԵԴԻԱՅԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 3/3.8-2/16438-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ԴԴ/22/12429-12, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 03/17.4/7120-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-6/13374-12 եզրակացությունները,*

**ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով (քաղ. Երևան, Նորք, 9-րո փողոց, 123 շենք) «Սթրայքեռ» կազմակերպության կողմից անհատ բարերարի միջոցներով ձեռք բերված բեռի՝ մեկ հոսանքի տրանսֆորմատոր (Power bright VC3000W, 1 տեղ, 16.5 կգ ընդհանուր քաշով, 500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են ԱՄՆ-ի դոլար 219, ՄՓ և ՍԱՓԱՄ Մ/S) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Ս- 995 - Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԹՈՊԵԴԻԱՅԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-2/16482-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N ԴԴ/22/12523-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-6/13368-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով (քաղ. Երևան, Նորք, 9-րդ փողոց, շենք 123) «Սթրայքեո» կազմակերպության կողմից անհատ բարերարի միջոցներով ձեռք բերված բեռների՝ բժշկական սարքավորումներ, տեխնիկա և պարագաներ (4 տեղ, 53.5 կգ ընդհանուր քաշով, 870 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 725 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ Մ/Տ) և արհեստական հոդեր (38 տեղ, 406 կգ ընդհանուր քաշով, 91.740.6 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5379 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ Մ/Տ, ցանկը կցվում է) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:


ՆԱԽԱԳԻՐ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Բժշկական սարքավորումների, տեխնիկայի և պարագաների ցանկը.**

	<b>Բեռի անվանումը</b>	<b>Քանակ</b>
1.	Կատետր վերքերի լվացման համար	3 հատ
2.	Ստերիլ վիրակապեր	12 հատ
3.	Շապիկներ	15 հատ
4.	Պրոթեզի օրինակներ	3 հատ
5.	Բժշկական գործիքներ	18 հատ
6.	Ռենտգեն փատաթղթեր /երևակված/	18 հատ/ 1 տուփ
7.	Գլխարկներ	14 հատ
8.	Արհեստական հոդեր /ըստ կից ցուցակի/	38 հատ







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 996 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՈՒՌՈՒՑՔԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 10-ի N 01/10-326 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 17-ի N 3/3.8-2/16557-12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 17-ի N 1/02.3/6552-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 19-ի N ՎՄ/3-6/13644-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի կառավարության և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության միջոցով իրականացվող ծրագրի շրջանակներում, ավստրիական Canberra Packard Central Europe Gmb կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների՝ 4.500.000 դրամ արժողությամբ, ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


Ի լրումն մեր 2012 թվականի դեկտեմբերի 24-ի  
N 15/15.11/18719-12 ելիցի

14 հունվարի 2013թ.


No 15/15.11/385-13

ՈՒ Ղ Ղ ՈՒ Մ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի N Մ-996-Ա որոշման 1-ի կետում «4.500.000 դրամ արժողությամբ» բառերը փոխարինել «8341 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը» բառերով, իսկ «բժշկական սարքավորումների» բառերից հետո լրացնել «1 տեղ, 11.8 կգ ընդհանուր քաշով, «Չվարթնոց ՄՏ»» բառերով:



ՀՀ կառավարության բարեգործական  
ծրագրերի համակարգման հանձնաժողով



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ - 997 - Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012  
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-893-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Այբ» կրթական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 4-ի N 3/3.8-1/15795-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N ՎՄ/3-4/12852-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու մասին» N Մ-893-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գաշես» ՍՊԸ-ի հետ (քաղ. Արտաշատ, Մարքսի 83, ՀՎՀՀ՝ 04222383) 2012 թվականի հոկտեմբերի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտաքին կոյուղու կառուցման և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 38.094.410 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 998 - Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-611-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(«Այբ» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Այբ» կրթական հիմնադրամի 2012 թվականի նոյեմբերի 27-ի գրությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 դեկտեմբերի 11-ի N 3/3.8-1/16160-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N ՎՄ/3-4/13333-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1063-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-611-Ա (2012 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-865-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում «40.511.747 դրամ» բառերը փոխարինել «81.551.671 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ - 999 - Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N Մ-423-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N 90 գրությունը, որոշում է:*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 8-ի «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-423-Ա որոշման 1-ին կետում «որը անհատույց հանձնվելու է դատապարտյալների ընտանիքներին» բառերը փոխարինել «որը անհատույց հանձնվելու է դատապարտյալների ընտանիքներին և Հայաստանում գտնվող շուրջ 200 կարիք ունեցող սիրիահայերի ընտանիքներին» (ցանկը կցվում է) բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական  
Կլոր սեղան հիմնադրամ  
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին  
Հայաստան  
Հեռ. +374 (10) 517 157  
Ֆաքս +374 (10) 517 436  
Էլ.փոստ armwcc@ecchmiadzin.am  
Ինտերնետ կայք www.roundtable-act.am



WORLD COUNCIL OF CHURCHES  
Armenia Inter-Church Charitable Round Table  
Foundation  
Catholicate of the Armenian Apostolic Church,  
Monastery of Elichmiadzin, Armenia  
Tel: +374 (10) 517 157  
Fax: +374 (10) 517 436  
E-mail: armwcc@ecchmiadzin.am  
Web site: www.roundtable-act.am

N 90

13 դեկտեմբերի 2012թ.

Տիար Սիմոն Տեր-Սիմոնյանին  
ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի նախագահ

Հարգելի տիար Տեր-Սիմոնյան,

Ի լրումն Կլոր սեղան հիմնադրամի 10 դեկտեմբերի 2012 թվականի թիվ 89 գրության, ստորև ներակայացնում ենք «Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի» շրջանակներում անհատույց տրամադրվող բեռի ցանկը.


Ապրանքատեսակ	Ընդամենը			Դատապարտյալների ընտանիքների համար			Սիրիահայերի ընտանիքների համար		
	Տեղ (կապոց/արկղ)	Արժեք*	Քաշ (կգ)	Տեղ (կապոց/արկղ)	Արժեք	Քաշ (կգ)	Տեղ (կապոց/արկղ)	Արժեք	Քաշ (կգ)
Շաձկոց	75	\$5,648.8	3,600.0	60	\$4,519.0	2,700.00	15	\$1,129.8	900.00
Դարբոցականների գրենական պիտույքներ	90	\$3,345.7	3,060.0	75	\$2,788.1	2,448.00	15	\$557.6	612.00
Մանկական հագուստ	100	\$2,327.7	1,405.0	95	\$2,211.3	1,331.05	5	\$116.4	73.95
Մտամի մածուկ և խոզանակ	100	\$1,893.7	1,230.1	85	\$1,609.6	1,013.02	15	\$284.1	217.08
Հիգիենայի պարագաներ	200	\$9,599.0	4,510.1	175	\$8,399.1	3,865.80	25	\$1,199.9	644.30
<b>Ընդամենը</b>	<b>565</b>	<b>\$22,814.9</b>	<b>13,805.2</b>	<b>490</b>	<b>\$19,527.1</b>	<b>11,357.87</b>	<b>75</b>	<b>\$3,287.7</b>	<b>2,447.33</b>

\*Արժեքը ներառում է բեռի փոխադրման ծախսը:

Հարգանքով՝

Կարեն Նազարյան  
Գործադիր տնօրեն

094-93266  
14 12 R



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 1000 -Ա  
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-969-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի  
N 2269 գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» N Մ-969-Ա որոշման (2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-611-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-852-Ա, 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1103-Ա, 2012 թվականի փետրվարի 03-ի N Մ-071-Ա, 2012 թվականի մարտի 23-ի N Մ-212-Ա և 2012 թվականի հունիսի 08-ի N Մ-426-Ա որոշումների խմբագրությամբ) 2-րդ կետում «74.076 ԱՄՆ-ի դոլարիմ համարժեք դրամ» բառերը փոխարինել «75.782 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով և «փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1.666.854 դրամ» բառերը փոխարինել «փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2350 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՅԵՐՈՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 1001 - Ա  
քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԻՆ  
ՎԵՀԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/16244-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/7833-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/13376-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 9.180.000 դրամ արժողությամբ «Հին վեհարանի հատակի պատրաստում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարիտաս» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի 2ա, ՀՎՀՀ՝ 03301484) 2012 թվականի հոկտեմբերի 22-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հին վեհարանի համար կաղնու հենցված փայտից հատակի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 9.180.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-

կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱԿ



ԴՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎՈՒՄ

ՄԱՅՐ ԱՅԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻՍՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

ՍՈՒՇԵՂ ԵՊԻՏԿՐՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ


« 06 » թվականի 2012 թ.

Հին Վեհարանի հատակի պատրաստման աշխատանքների

Ծ Ր Ա Գ Ի Ր

16/3

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է պատրաստել հատակ Հին Վեհարանի շենքի համար:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀԳ 04703401
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6	Ծրագրի քուլջեն	9,180,000 ՀՀ դրամ
7	Բարեգործությունն ստացողը	Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	20 դեկտեմբերի, 2012թ. – 28 փետրվարի, 2013թ.:
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ամիրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է պատրաստել հատակ Հին Վեհարանի շենքի համար 9,180,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Կարիտաս ՍՊԸ-ի (ՀՀ. ք. Երևան, Աշտարակի խճուղի 2Ա, ՀՎՀԳ 03301484) կողմից, պայմանագիր կնքված 22.10.2012թ.:
10	Ձեռք բերվող արարների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հին Վեհարանի շենքի համար կատարել կաղնու հնեցված փայտից 270քմ, 13սմ լայնությամբ, 1.5մ երկարությամբ և 17մմ հաստությամբ հատակի պատրաստման աշխատանքներ՝ 9,180,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ծարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:







**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ- 1002 - Ա  
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԻՆ  
ՎԵՒԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՀԱՎԱՍԱՌԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/16246-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/7834-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/-13383-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2.029.400 դրամ արժողությամբ «Հին վեհարանի շենքի հակասառեցման համակարգի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. Երևան, Մամիկոնյանց 51/1,39, ՀՎՀՀ՝ 02529731) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հին Վեհարանի շենքի հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2.029.400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի

պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ




Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ

ՄԱՅՐ ԱՔՐՈՒ ՍՈՒՐԻ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՎԱՐՉԱՏՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ  
ՍՈՒՇԵՂ ԵՊԻՍՏՈՍՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

« 06 » թվականի 2012 թ.



Հին Վեհարանի շենքի հակասառեցման համակարգի տեղադրման աշխատանքների

Ծ Ր Ա Գ Ի Ր

16/4

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Հին Վեհարանում տեղադրել հակասառեցման համակարգ:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6.	Ծրագրի բյուջեն	2,029,400 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռի միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20 դեկտեմբերի, 2012թ. – 28 փետրվարի, 2013թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հին Վեհարանի շենքում տեղադրել 555մ ջեռուցման մալուխ իր հարակից նյութերով՝ 2 029 400 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Շինարարական աշխատանքներն իրականացվում են «Կարին» ՍՊԸ-ի (ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 54/1,39 ՀՎՀՀ 02529731) կողմից, պայմանագիր թիվ 15Շ/012, կնքված 27.11.2012թ.:
10.	Չեղք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է Հին Վեհարանի շենքում կատարել հակասառեցման համակարգի տեղադրման աշխատանքներ 2 029 400 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չի նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն «Կարին» ՍՊԸ-ի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:

✓



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ-1003 - Ա  
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
«ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՎԱՍԱՌԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 3/3.8-1/16248-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 01/7832-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի դեկտեմբերի 13-ի N ՎՄ/3-4/-13377-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 1.630.000 դրամ արժողությամբ «Վարչական շենքի հակասառեցման համակարգերի տեղադրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կարին» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, քաղ. երևան, Մամիկոնյանց 51/1,39, ՀՎՀՀ՝ 02529731) 2012 թվականի նոյեմբերի 27-ին կնքված եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է իր ուժերով, միջոցներով ու նյութերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչական շենքի հակասառեցման համակարգերի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 1.630.200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝


1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործա-

կան ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Էջմիածնի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ



ՍՏԵՐ ԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՄԱՅՐ ԱՅՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՏՆՕՐԵՆ

Տ. ՍՈՒՇԵՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԲԱՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ

« 06 » 2011թ.

Վարչական շենքի հակաստեցման համակարգերի տեղադրման աշխատանքների

Ծ Ր Ա Գ Ի Ր

16/5

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է տեղադրել հակաստեցման համակարգ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վարչական շենքում:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ԳՎՀԳ 04703401
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք
6.	Ծրագրի բյուջեն	1,630,200 ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի միաբանությունը և աշխատակազմը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	20 դեկտեմբերի, 2012թ. - 28 փետրվարի, 2013թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է հակաստեցման համակարգի տեղադրում «Կարին» ՍՊԸ-ի կողմից՝ 1 630 200 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքներն իրականացվում են «Կարին» ՍՊԸ-ի կողմից կողմից (ՀՀ. ք. Երևան, Մամիկոնյանց 54/1,39, ԳՎՀԳ 02529731), պայմանագիր կնքված 27.11.2012թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է տեղադրել 450մ Ձեռուցման մալուխ իր հարակից նյութերով՝ 1,630,200 ՀՀ դրամ արժեքով առանք ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժնի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 դեկտեմբերի 2012 թվականի N Մ-1004 - Ա  
քաղ. Երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՒՐԲ  
ԱՎԵՏԱՐԱՆԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ԱԼԲՈՍ-ՕՐԱՑՈՒՅՑԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ»  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

